48. **Մայր Դպրատուն.** — ՄԿՐՏԻՉ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ ԱՄԻՐԱՅ (ծն. 1742, մեռ. 1800) որ 1790 ին Կ. Պոլսոյ անդրանիկ բաղդին **դպրատունը** (վարժարան) հիմնած է ի Գում-Գաբու, Թըրքըր փողոց, և որ ՇՆՈՐՀՔ պատուանունը առած է Զաքարիա պատրիարքէն՝ իր կրթանուէր և եկեղեցասէր արարքներուն համար, վերին հսկողութեամբ ՄԱՏԹԷՈՍ ԴՊԻՐԻ՝ կը բանայ տպարան մըն ալ «Մայր Դպրատան» մէջ ուր կը դրոշմուին հետեւեալ գիրքերը. — 1792. **Յուղ քահանայից** (ապաշխարողներ խոստովանցնելու համար տէրտէրներու առաջնորդ, երկասիրութիւն Կաղզըվանցի Պօղոս քհնյ.ի, տպուած Շնորհք Ամիրայի ծախքով): — 1793. **Ճաշոց** (Մուրատ Ամիրայի ծախքով): — **Ճառ** վասն ծննդեան և չարչարանաց Տեառն մերոյ Յս.ի Քս.ի, (հեղինակ՝ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոզիչ Գէորգ Վ.արդ.): — 1794. **Նուագարան** (հեղինակ՝ Կեսարացի Գալստագեան Գրիգոր դպիր, Ջերան Մհտ. Մինաս Ամիրայի ծախքով): — **Ժամագիրք** («օգնականութեամբ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրատան մանկավարժ Առաքելեան Առաքել դպրի», գրաշար՝ Մանուել դպիր, գրուող՝ Յարութիւն, մրագարկ՝ Մինաս և Յունան): — Վերոյիշեալ գործերուն տպագրիչ եղած է Մատթէոս դպիր որ այնուհետեւ Մայր Դպրատան տպարանէն կը հեռանայ և առանձին կը գործէ: - Միեւնոյն տպարանը 1805 ին կը դրոշմուի **Տետրակ զանազանութենէ կենցաղոյս** անուն Նալեան Յկբ. պատր.ի և այլոց ոտանաւորներու հաւաքածոյ մը՝ «ի ձեռն տպագրիչ ՄԱՐՏԻՐՈՍԻ» զոր պէտք չէ շփոթել Սարգսեան Մհտ. Մարտիրոսի հետ, քանի որ վերջինս 1752 էն մեռ.ած է: - Հ. Գաֆրաննեան իր ձեռագիր ցուցակին մէջ Մայր Դպրատանէն լոյս ընծայուած կ'արձանագրէ 1808 թուականով «Քերականութիւն համառօտ» մըն ալ:




ՄԱՅՐ ԴՊՐԱՏԱՆ ՄԷՋ ԴՐՈՇՄՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՄԸ 2 ԷՋԵՐԸ

49. **Մատթէոս Դպիր.** — ծնած է 1740 ին և իր ուսումնականութեամբ՝ համակրութիւնը շահած Շնորհք Ամիրայի որուն հիմնած տպարանին մէջ բաւական ատեն տնօրէնի պաշտօն վարած է, ինչպէս տեսանք վերեւ: Մատթէոսի դրոշմած գիրքերէն մէկուն Յիշատակարանին մէջ կը հանդիպինք «նուաստ մանկավարժ» յորջորջման՝ իր անձին համար գործածուած. կը հասկցուի թէ վարժապետ էր. իր քոյրն ալ, **Բրաքսին Նօտար**, վարժուհի էր արդէն: — Մատթէոս շարադրած է 1776-8 տարիներու օրացոյցները՝ Հրեայի մը օգնութեամբ: — Մայր Դպրատան տպարանէն հեռանալէ վերջ իրենը կը հիմնէ Պալաթ, «ի բաղն Այվանսարայի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետի»: — Ըստ Հ. Գաֆրաննեանի ցուցակին, Մատթէոս դպիր 1800 ին տպած է **Սաղմոս** մը հայ. տառ. և 1802 ին՝ **Քրիստոնէական փոքրիկ**: - Տպած է նաեւ 1805, 1809 և 1825 տարիներու օրացոյցները որոնցմէ 1825 ն իր վերջին գործն կ'ըլլայ, նոյն տարին իսկ մեռած ըլլալուն: